

Տ Ի Գ Օ.

ՀԱՆԻ ԱԴԱԹՆԵՐԱՆ
ՊԱՏԿԵՐՆԵՐ
ԺՊԱՏԸՏ ԳՕԼԱՏ ԿՏՐԻ

Ltn

✓ 2112

1999

Տ Ի Գ Օ

ՀԱՆԻ ԱԴԱԹՆԵՐԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Դ Պ Ա Տ Ը Տ Գ Օ Լ Ա Տ Կ Տ Ր Ի

2049.



ՀՔ 2118

Թ Ի Փ Լ Ի Ս
ՅՈՎ. ՀԱՆԿԵԼՍ ԻՍԽԱԲԵՐԱՆԵՐԻ ՏՊԱԿԱՆ
1889

42112-60



Երկրորդ Գրքի Բացման
 և Հանգանքի մեջ Բացման
 Մաս և Երկու Մաս Երկու
 22/11 89 թվական

Дозволено цензурою. Тифлисъ, 4 Февраля 1889 г.



Типография И. Мартirosianца, Орб. ул., д. № 1—2.




Շուշու Ազգային Օրիորդական Ուսումնարանի անդրանիկ տանուհիների՝

Տ. ՀԵՐՅԵԼԻԱ ՍԻՄԻՕՆԵԱՆ ԳԱՆՔԵՅԵԱՆ—ԲԱԴԴԱՍԱՐԵԱՆ

ՕՐ. ՄԱՐԳՐԱՅԻՆԷ ԹԱԴԻՍԵԱՆ ՄԱՍՈՒՄԵԱՆՑ

Տ. ՀԵՂԻՆԷ ՊՕՂՈՍԵԱՆ ԱՂԱՄԱԼԵԱՆ—ԶԱԽԱՐԵԻԳԵԱՆՑ

Վաղաժառանգ փոքր չիշատակին:



Ա. ՊԱՏԿԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍԻ ՏԱՆԸ

Դրած է կարելու մեքենայ, աթոռներ, սնդուկներ, և այլն:

(Մարիամը կարում է, ցածր ծայնով երգելով)

ՆԱՆԸՄ (մոռում է). Մարեան, քրմատաղ, ըստեղերք վըհա-
քածա՛. էլլհա խընամախօս ա եկալ հուռումին մըհար.
պերեմ ըստեղ, էն օթախը հեն ա եր փըռած, շանը
հալին:

ՄԱՐԻԱՄ. Ելի խնամախօս. ախ, աչան, որ դու էդպէս ոտներ
ձեռքըս ընգել է: Հարիւր անգամ դրա համար խօ-
սացել ենք և ասել, որ գոնէ մինչև տասներեօթը
տարին ով որ էլ ուզի, չըտանք:

ՆԱՆԸՄ. Դէ եկողին տիւս չըն անիլ հո՛ւ: Լեաւա քրմատաղ,
թող կեա տեսնամ հըշտեղան ա, հո՛ւ ա, հո՛ւ չի.
տիւ հուռումին թըազա կեապիւտ փաչի դերեան կեց
սօ, կըլօխը, գատը լաւ շինի, չաչ սօ պերի, եմիշ էլ
շինի, բօլ-բօլ ածի, խօշքեաբար էլ դըրկի:

ՄԱՐԻԱՄ (դուրս գալով). Լաւ է, բոլորն էլ կարգին կըպատ-
րաստեմ ու կըղրկեմ, միայն դու գեռ խօսք չըտաս,
ու՛մ համար էլ որ լինի:

ՆԱՆԸՄ. Հալբատտա, դէ հալա մին տեսնամ հիւր մըհար ա,
եննան կասեմ, թա մունք էլ մին մէտքը կանենք,
ջօղաբը կասենք: (Մարիամը դուրս է գնում.) Կօզի հար-
սըս ասըմ ա, ոէր խելքըս կըտրած տեղն ընի, խօսք ըմ
տալու: Համօթ ա է, էսքան վախտ տըռանը կաղնըցը-

րալ ըմ, խօսքաւ ըլալ. քընամ համեցէք անեմ. (դուք
է գնում. երկու րօպէից յետոյ մտնում է Մանանի հետ:

ՆԱՆՆԸՄ. Համեցէք, համեցէք, էտ ոէր խաչաց ա մեր տօն ըս
եկալ. համեցէք քըմատադ, նըստի:

ՄԱՆԱՆ. Մին լեաւ տղի խաչից. (նստում են):

ՆԱՆՆԸՄ. Հինչ ըք անըմ, հինչ չըք անըմ, հոնց ըք, խօսեր-
քըտ, ըրախերքըտ լեաւ ըն:

ՄԱՆԱՆ. Փառք Ասծու, քեզանա կըհարցընենք, տիւք
հինչ ըք անըմ:

ՆԱՆՆԸՄ. Կանք ըլի, ապըմ ընք:

ՄԱՆԱՆ. Նանըմ-բաջ, էս ցըրտին, թանգուլթիւնին նըհետ
հոնց ըք եօլա քընըմ:

ՆԱՆՆԸՄ. Յորտ ու թանգուլթիւն ասի, պաց թող արա:
Մանան, քըմատադ, ըստհէնց տարի ըս տեսալ. քընա
ըստհէնց տարին, էլ ոէչ ետ կեա: Սով ա ըլի:

ՄԱՆԱՆ. Ասծու պարկուլթիւննա ըլի, եանի ըստհէնց դօվը
ըս տեսալ, ասըմ ըն՝ մին թըազա հրաշք էլա ըրացալ,
լըսալ ըս:

ՆԱՆՆԸՄ. Ձէ, հու ա տեսալ: Եանի արագի ա, սուրփի ա,
հրաշքի ա վըհատըմ ըն: Ես էլ մին օրիշ խեւք կըտ-
րելի գատ ըմ լսալ, հեսա նաղը կանեմ, տիւ լսածըտ
հալա ասի. խօսքըտ շաքարաւ կըտրեցի:

ՄԱՆԱՆ. Ձէ, տիւ նաղ արա, եննան էլ ես կասեմ:

ՆԱՆՆԸՄ. Դէ առաջ տիւ իր օգոււմ ասես. ես քու խօսքըտ
կըտրեցի:

ՄԱՆԱՆ. Հին գիւգամ է, ծառաց ըմ գօրուլթիւնին, (երեսին
խաչակնքելով) ասըմ ըն թա՝ Դօնգլի տակին մին ջէչ-
րան ըն տեսալ, մին կիր վիզըմը. պացըն արալ կար-
թալ, կըրած ա ըլալ թա՝ էս ցաւը, թանգուլթիւնը, ոէր
աշխարքս պատալ ա, լոխ իմ պըտըհասըս ա, թա
մեղա կըլեաք, Աստուած մըտներըտ կըքցէք, պաս
կըպահէք, ժամ կըքընաք, աղօթքը կանէք, ճոււ
կըպահէք, թափուր տիւս կըլեաք իւր-իւր մէս օտելըցը

ետ կըտառնաք, մեծ ու պիւճիւր կըճընանչէք, ձեզ
եըրա էլլհա իմ ողօրմուլթիւնըս կըհասցնեմ, թա չէ՝ ա-
սածներս լըսիլ չըք, սըրանից էլ բէթար օրի մէջ
ըմ քցելու:

ՆԱՆՆԸՄ. Մեղա քեզ Աստուած (երեսին խաչ հանելով), տիւ քու
ողօրմուլթիւնը հասցնես, ըստրանա բէթարան ազատես:

ՄԱՆԱՆ. Մին օրիշն էլ ա ըլալ, ասըմ ըն: Մին չօլըցի մարթ
ճըմակըմ մին սաս ա լըսըմ, քընըմ ա, ամմա վախըմ
ա մօտկանա, էն սասը մին էլ ա կանչըմ թա՝ եկ,
վախիլ միր: Չօլըցին քընըմ ա մօտանում, տեսնըմ մին
աժղահա սիպտակամրօք մարթ, սիպտակ շօրերը հա-
քին կաղնած: Չօլըցին ընդրան կիլօխ ա տամ, կաղ-
նըմ: Էն մարթը ասըմ ա թա՝ — քընա լոխ չօլերը, Դա-
լան, լօխչու էլ ասի ճընապարի կեան, թա չէ՝ ըստ-
րանա բէթար օրի մէջ ընք քցելու: Չօլըցին ասըմ ա,
քըմատադ, էտ իմ պանը չի, մին արք ունեցօղ մարթի
ասի, ոէր վըհատան, ոէր ես ասեմ, իմ կըլիսիս մին դա-
փաղ էլ կըտան, ճընապարհ տընեն: Եննան էն սուրփը
(երեսին խաչ հանելով) ասըմ ա՝ քընա, վախիլ միր, դօշն
էլ պանալ ա տալիս, ձեւքը եըրան տընըմ, եր ա օնըմ
կեարմիւր նըշանան մընըմ ա: Մըհէլ ասըմ ըն, հենա էն
չօլըցին շէն-բա-շէն ընգած, նաղըլ ա անըմ, ընտեղեր-
քան էլ ոէր պըրճընի, կեալու ա Դալաս: Ասըմ ըն, կոր-
ծակալն էլ կընդստօրին կիրալ ա, մըհէլ առչնորթը
հենա հրամայալ ա, ոէր հազըրուեն, էն մին գիրագի օրը
կեալու ա, ոէր թափուր տիւս կեան:

ՆԱՆՆԸՄ. Ձէ, իմ լըսածն էլ օրիշ ա. եանի, վալլահ, ըսկի
ըստրան էլ չըն վըհատըմ: Ասըմ ըն, ըստեղ ոէր մին
կամեղեաչի եկաւ հա, բալքամ մէտըտ ընի, ոէր եր-
գինքն էր պըցրանըմ:

ՄԱՆԱՆ. Հա, հունց չի մէտըս, նըրա աչքն էլ տիւս կեա:
Եանի էլ գատ մընաց, ոէր էս վերջի դեօվրերս լսենք
ոէչ, տեսնանք, ոէչ:

ՆԱՆԸՄ. Ին մարթը, ոէր երգինքը չը պէցրացաւ, ընտրանից եննան էլ մէր էս Ղալի կըտորաճքը սկըսեցին ընդհէնց թղթի գատէր շինել, ոէրը կատու, ոէրը շօն տական կապիլ, երգինքը պէցըրցնիլ: Աստաճ էլ տեսնալաւ, իւրան պարկուժիւնը սկըսալ ա ըստհէնց մէր կըլխին եր ածիլ: Հալա էս մէզ խըրեկ ա (մտնում է Հոխիսիմէն եւ բերում է չալ ու տալիս Մանանին եւ Նանըմին): Էս ջահիլներին քըշտին էլ ոէր ըստհէնց լըսաճներս նաղլ ըմ անըմ, ինձանաւ ծըճաղըմ ըն, իլլաքըմ հարսըս. ասըմ ա՛ աչան, մեղք ա, ըտհէնց պաներ մի նաղլ անիլ, էլ չասես: (Մանան ուշադրութեամբ լսում է նախելով օրիորդի վրայ): Ասըմ ա՛ էտ Ասծու ողորմութիւնն ա, ոէր ըտհէնց գատեր ըն կարըմ քթնիլ, ասըմ ա՛ Փրանգըստանի կըռւի ժամանակը ընտրանաւ ըն մին քաղաքից մին քաղաք քընեցալ իւր-իւր քեօմագ հասցըրալ: (Օրիորդը դուրս է գնում): Էն Աստաճը, էն ջուռալեաւ-լեաւ նաղլեր ա անըմ, ոէր կարալ չըմ ասեմ: Էն սուրփ Սարի-Ֆէգը (երեսին խաչ հանելով), էն կեարմիւր Աւետարանը, մինչի մըհէկ հո՛ւ ա գիղացալ թա՛ հինչ կա, հինչ չըկա աշխարքըմըս: Հաչ քրիստօնեա, հաչ քրիստօնեա հէնց անըմըն ըմ ըլալ գիղըմ, ամմա մըհէկ, փառք Ասծու, գիղըմ ըմ հինչ ասիլ ա հաչ, հինչ ասիլ ա քրիստօնեա: Էն խաչը, մին փիլիսօփի խելք օնի կըլխըմը: Հարիւր տէրտէրի, վարթաբէդի կըլխի խելք կըտընի: Էն Աստաճը, էն օրին մին նաղլ ա արալ, ոէր մագերըս սաղ փըշըքաղալ ա, կազեթըմն ա ըլալ կիրած: Էնքան լացըմ ըլալ, ոէր էլ կարալ չըմ ասեմ:

ՄԱՆԱՆ. Խէ, լաց խէիր ընըմ:

ՆԱՆԸՄ. Է (հառաչելով) հի՛ն գիղամ է, հայաստանըմը, Վան քաղաքըմը, չոյերումը սով ա ընգալ, մարթիքը ճանճի նըման կըտորվըմ ըն, ամմէն տեղան էլ փող ըն ղըրկըմ, քեօմագ ըն հասցընըմ, հէնց մարթիք էլըն ըլալ, ոէր հազարներաւ ըն ղըրկալ: Էն կանանչ մեռուկը (Մանանը

երեսին խաչ է հանում): Էն նաղլը ոէր ասեց ոէչ, հէնց գիղաս կլխիս մին կօժ իփ եկաճ ճիւր պարան տըռնու (չալ նն խմում) էլ գիղացի ոէչ թա՛ հինչ անեմ, տասը մանէթ հոքապահուստ օնի, քընացի, ղաւուլսաս հանեցի, պերի տւի հարսիս, ասեցի՝ շուտ արա, էս փօշտաւը ղըրկի: Էրկու մանէթ էլ հուռումը տըռաւ, հինգ մանէթ էլ հարսըս: Իւրուզունն էլ ոէր Մարդիս տօն եկաւ, մարթը մին տեղան ասեցինք՝ աւալըմը սկըսեց ճըղճըղալ, ուշունց տալ, եննան հարսըս մին քանի խելունք խօսկերք ասեց, հուռումն էլ մին ղըրաղան ափաթը կըտըրեցին, քսանըհինգ մանէթ ինք առին, ու լոխ մին տեղ ջամ արին, ղըրկեցին, իրէզլաւ կազեթումն էլ—Մշակըմը կիրած ա ըլալ, ոէր փողերը տեղ ա հըսալ: Մանան, տիւք էլ մին գատ տըռէք, խեղճ ըն, որ կարթեն քըշտիտ, էն Սարի-Ֆէգը, (երեսին խաչ հանելով) սաղ կըլօխըտ կըքանդես, ընդրանց ղըրկես: (Հոխի. գալիս է ժողովում բաժակները եւ դուրս տանում):

ՄԱՆԱՆ. Նանըմ-բաջ (հանելով քսակը) առիս հինգ մանէթ կա, ինք առ տօ (տալիս է փողը) հարսիտ, էլլհա ղըրկի ընդրանց մըհար:

ՆԱՆԸՄ. (առնելով փողը) Կըսամ կըղըկի, ոէր կազեթըմն էլ կըկիրեն թա փողը հասալ ա, էն վախտը էն կիրածը կըղըրկեմ, կարթիլ կըտաս, արխաչին կընգնես: Եանի, Մանան, քըմատաղ, տիւ էլ եադ չըս ըլի, մեզանա մինն ըս, հալալ քըռոր տեղ ըս համարեա:

ՄԱՆԱՆ. Հալբատտա ոէր, բա հինչ ա, էտ հինչ խօսք ա:

ՆԱՆԸՄ. Էն կըլխան, ոէր իմ Մարդին տըքացալ էր էտ ախճրկան երրա, էլ ոէչ քօն օնէր, ոէչ ղարար: Սաղ օրը էտ ախճիկը մըննան ընգնըմ չէր, նըրանք էլ թարսվալ ին, տալիս չին. եանի ես էլ չի ըսկի ըռագի, ոէր ընդրա օգի, ասըմի մէզ նըհետ սաղ չի կեալ. նա ղարաւաշաւ, գեադաւ, մօզիկաւ, ուսումնարան քընե-

ցած եկած, լեաւ ապրած ա, թողարա մէր ճըպատը մէր քօլան կըտրենք. վերջը կըլօխըտ հինգ ցաւըցընեմ, տըմնըհինգ հըգար մանէթ ախճըկան անըմաւը քըցեցինք բանկը, եննան հըգար մին մըննաթաւ տըւին, համարեա թա՛ղօռաւ պուք տըւինք: Ամմա ես ընեմ էն կանանչ մեռուներ (երեսին խաչ հանելով) նա ըստեղ չի, ընդրա Աստուածը ըստեղ ա, իմ փորից ըլաճիցը շատ ա ինձ պատիւ տալիս, խաթրըս պահըմ, մին խօսք ասած վախտը կըլխին երրան ա անըմ:

ՄԱՆԱՆ. Դէ լեաւ ա, լեաւ ա, պարաւ բարն էլ օտես:

ՆԱՆԸՄ. Մըհէկ ես էլ ըմ հըւատըմ, ոէր ուսումը լեաւ ա, Աստուած հաստատ պահի ընդրա աղաթ քըցողին տօնը: Դէ հենա խեղճ քիւրըս էլ ա քընեցալ մինը պերալ, հուկն էր ճըմական փրոնած. ամմա մըհէկ մին լիւզու ա հանալ, ոէր էլ կարալ չըմ ասեմ. դիւշմանիս էլ ըտհէնց հարսը չի ռաստ կեա (Հոխի. կրկին բերում է չայ, նրանք վեր են առնում, իսկ Հոխի. դուրս է գալիս):

ՄԱՆԱՆ. Դէ լեաւ ա, լեաւ ա, հալալ ընի քու հարսիտ կերած ճէճը, Աստուած քեզ բախշի:

ՆԱՆԸՄ. Բա հալալ ընի է, մարթին հետի մին խազնաչ ա, ամմա դադըր գիդըմ չի, խեխճին սէրտը շատ ա կօտըմ: Խեխճը խալխերին հարսներին նըման ասըմ չի, թա էս արա, էն արա, էս պեր, էն տար, էս ճեւի, էն կարի, ամմա էլլհա դադըր գիտըմ չի իմ տըղան: Աչք ա տամ, լիւս չի տալիս խեխճ ջահիլին: Հէնց վախտ ա ընըմ, մինչի լիւս նըստըմ ա մարթին հետաքնըրը, կիբըրը, դաւթարը, կիբըմ, ճընջըմ, էլլհա աչընըմ կեամ չի: Էն Ղօնդիկը, օրիշ ընէր իմ տըղին տեղ, ընդրա շաքը պանքախաւ կըվըհաքէր:

ՄԱՆԱՆ. Խէ, նանըմ-բաջ, խէչ ա ըտհէնց անըմ. խէ չի եօլա քընըմ ջահիլին նըհետ:

ՆԱՆԸՄ. Ես գիդըմըմ, ոէր ամէն քշեր կըլխին մին կաթ-ղօլօսի բարօզ կընի կարթըմ:

ՄԱՆԱՆ. Դէ բալքամ մին մանի կա, ոէր ըտհէնց ա անըմ: Հտհէնց աչք ա տամ, լիւս չի տալիս:

ՆԱՆԸՄ. Աչքըս տիւս կեա, թա մին մանի ընի, խէ չի իմ տղան ա բէղասըլը: Էն կեարմիւր Աւետարանը (երեսին խաչ հանելով) թա հետա էրկու տարւան հարս ա, ես նրանից մին կորկի դըղար էլ նըղացած ընեմ: Քշերաւը եր ա կենըմ, սըմաւարին տակին նըստըմ, չաչը շինըմ, վըհաքըմ, մինչի հացավախտը մաշինին տակին նըստըմ, հացն օտըմ, քեարդեահին տակին նըստըմ, հուռումին էլ քաշըմ կըռնատակը, սըվըրըցընըմ, ընդեղան եր կենըմ, էլլհա չաչին տակին նըստըմ, վըհաքըմ, հուռումին տեսը, մօզիկը աճիլ տամ, սըլըրըցընըմ:

ՄԱՆԱՆ. Հուռումը կարթըմ ա, մօզիկ էլա սըվերըմ, դէ լեաւ ա, լեաւ ա (Հոխի. գալիս է հաւարում բաժակները):

ՆԱՆԸՄ. Բա հինչ ա: Թըրազա փտակաւ վախտը ինքը մին ղօլ կաղնեց, մուկ ք լօխ մին ղօլ, թա ուսումնարան ղըրկենք, մուկ ք ըռաղի չի կացինք, մըհէկ հինչ-քանըմ փեշմանալ, թա հինչքան: Եննան տեսաւ, ոէր ղըրկըմ չընք, քաշեց իւրան կըռնատակը, սկսեց համ կարթըրընիլ, համ շնօրք սըլըրըցընիլ: Մըհէկ շընուրհակալըմ, հաչաւոէր էլ, ուսաւոէր էլ, փռանդաւոէր էլ համ կարթըմ ա, համ իւրանուգեօրա կիբըմ ա, համ մօզիկ ա աճըմ: Ամմէն սկեսուօր էլ ինձ նըման հարսը բօրջ անի Աստուած:

ՄԱՆԱՆ. Ամմէն, ամմէն:

ՆԱՆԸՄ. Ոէր ասալ ըն՝ ասիլգաղին նըհետ քար քաշի, բէղասին նըհետ եախնի փլաւ մի օտիլ, դօրթ ոէր ղըրիւստ ըն ասալ: (Հոխի. բերում է մրգեղէն թեփշիներ, դանակ, եւալի, եւ բաժանում) Դէ համեցէք, քըմատաղ, Մանան, երկալ կեր, ամմէն հինչան էլ բօլ-բօլ երկալ: (Մանանը վեր չի առնում) Հը, հինչ ըս նազ անըմ, երկալ, համեցէք. (ինքը վեր է առնում ամեն մրգերից իր եւ Մանանի համար, Հոխի. դուրս է գնում):

ՄԱՆԱՆ. Էն կանանչ մեռունը, իմ աղպոր արևը, թա՛ ձեռ-
քըս մին գատի էլ նի տամ, մինչի... ասեմ ոէչ:

ՆԱՆԸՄ. Հինչ ա, կեր, էլլհա ասի:

ՄԱՆԱՆ. Ձէ, առաջ կասեմ, եննան կօտեմ:

ՆԱՆԸՄ. Դէ լեաւ, ասի պրծի, եննան օտենք:

ՄԱՆԱՆ. Դէ հինչ ասեմ, Նանըմ-բաջ, մին խէր պանի մը-
հար ըմ եկալ, գիղըմըմ, ոէր խօսքըս կօտրիլ չըս:

ՆԱՆԸՄ. Ասի, ասի, քըմատաղ, ոէր ինձանա ընի, խէլ ըմ կօտ-
րըմ քեզ նըման աղիզ ղօնաղին խօսքը:

ՄԱՆԱՆ. Էսքան վախտ ա դօստ ու ճանանչ ընք, ող-
ճուճաքիւր ընք, գիղըմ ըս, ոէր քեզ մօր ու քըւօրից
ճօկիլ չըմ:

ՆԱՆԸՄ. Էն սուրփ Մարի-Ֆէգը, (երեսին խաչ հանելով) ոէր
ըտհէնց ա:

ՄԱՆԱՆ. Հեսա մին ամիս ա Նատօրունց Աիրի-քօրին կնէկը
ափաթըս կըտրած, թա պիտմա փըլանքեասին ախճիկը
հունց ոէր էլ ընի, օգեմ իմ Թաթօսիս մըհար. վերջը,
կըլոխըտ հինչ ցաւըցընեմ, էս ըրուզունի ժաման ղօ-
ռաւ քըռի-քըռի անելաւ դըրկալ ա, թա հէնց մըհէկ
գըրգեամուտ ըրուզուն ա, լեաւ վախտ ա, քընա: Դէ Նա-
նըմ-Ֆաջ, էլ ասիլըս աւելնօրթ ա, թա հունց տօն,
հունց տըղա, հունց սկեսուր: Առուտուրին մին ճօն-
ղը Մարսիլեա, մին ճօնղը Մօսկօվ, Թիփլիս, մին
ճօնղը Նուխի, Թարւիզ:

ՆԱՆԸՄ. Լեաւ ըս ասըմ, քըմատաղ, Մանան, ամմա ախէր
մին պեան կա է...

ՄԱՆԱՆ. Հինչ կա, ասի տեանամ, հինչին ըս փօտ տընըմ:

ՆԱՆԸՄ. Ոէչ մին գատին էլ փօտ չըմ տընըմ, շատ լեաւ ա,
ամմա... ախճի, մին կեր է: (Սկսում է ինքը ուտել եւ
նրան ուտեցնել):

ՄԱՆԱՆ. Էն կանանչ մեռունը, (երեսին խաչ հանելով) թա
ձերքըս մին գատի էլ նի տամ, չրանը էս մտանին հու-
ռումին մաննըմը չըտնեմ (հանում է իր մատնից եւ ցոյց

է տալիս): Դէ հալա խօսք մի խառնիլ, էլվախտ մին
գատ իր օգըմ ասիլ:

ՆԱՆԸՄ. Հա, էնի ասըմ թա՛ ախրը տըղան ըստեղ ոէչ, իւ-
րանք տընենք թա շատ էլ օգըմ ըն, ոէր օգեն, տղան
բալքեամ կեալու ա հաւան չի կենալու, եա մին օրիչ
աչքըտըրած ախճիկ օնի:

ՄԱՆԱՆ. Մեղա Ասճու, հալա էն տղին անգուճն էլ ըն
քըցալ: Փախաղը պիտմա երգինքը քըցի, ոէր հուռու-
մին նըման ախճիկը իւրան ըն տալիս:

ԿԵԱԼՈՒՍՏ. (մոռնելով) Աչան, աղան տանն ա:

ՆԱՆԸՄ. Ձէ, հինչ ըս անըմ:

ԿԵԱԼՈՒՍՏ. Տըռանը կանչող կա, բա հըշտեղ ա քընեցալ:

ՆԱՆԸՄ. Վըհատա փօշոր քընաց, շատ վախտ ա քընեցալ ա,
մըհէկ հըշտեղ ոէր ընի, կըկեա, (Վալուտը ցանկանում է
դուրս գնալ) Աւալուստ, Աւալուստ, դօրմի քու հօր, մին
էտ լամպը, ճրաքը վառի, եննան քընա, խօսքաւ ընք
ըլալ, առի մըթնալ ա: (Վալուտը ցանկանում է վառել,
բայց Հոխիսիմը միւս սենեակից երկու վառած մօմ է բե-
րում): Դէ լեաւ ա, լեաւ ա, Աւալուստ, հենա հուռումը
բերաւ, տիւ քընա քու պանիս: (դուրս են գնում, Վալուտ
մէկ դոնով, իսկ Հոխի. միւս դոնով): Ախր ես ըմ ասըմ,
էտ Մարեանիցը չի, ոէր ճրաք չը դըրկի, շատ էլ մուկը
խօսքաւ ըլած ընենք: Ախճի, մին կեր է:

ՄԱՆԱՆ. Ձէ, Նանըմ-բաջ, քըմատաղ, պրծի ինձ մին դօղրու
ջօղաք ասի, ես քընամ, շատ ետ ընգի:

ՆԱՆԸՄ. Կըքնաս ըլի, հինչ ըս թա՛ թիլ ընգնըմ, ախճի հա-
լա մին կեր է, մինչի օտես ոէչ, ասելու չըմ:

ՄԱՆԱՆ. Ձէ, էն Աստուածը, ուրթում կերած չընի, էլլհա կօ-
տի, ամմա ուրթըմ ըմ կերալ, մինչի ջօղաքը ասես ոէչ,
օտելու չըմ:

ՆԱՆԸՄ. Դէ քըմատաղ, Մանան, գիղըմ ըս, ոէր քու խաթըրը
հինչքան կօգեմ, ձերքաւս եկաճն էլ մուկաղա չըմ
անիլ, ամմա տա էն ջուռա մին պան ա, ոէր մին

մընութումը մարթ կարալ չի եա հա ասի, եա չէ. դէ մէզ էլ մէզըգեօրա պարեկամ, դօստ, մեարքբիւր օնենք, էտ էլ զըրադ, բա առանց հօրը մունք կըկարանք եա հա ասենք, եա չէ:

ՄԱՆԱՆ. Դէ լաւ, էլ ըտհէնց զատեր մի ասիլ, տիւ խօսք տօ, եննան հօրը կիրիլը մեր վըզին:

ՆԱՆԸՄ. Ախրը, Մանան, քըմատաղ, խէ՛ք ըս ըտհէնց ջահիլ-ջահիլ խօսըմ:

ՄԱՆԱՆ. Դէ ոէր հինչ, տիւ կասես, ես կասեմ, կէս քըշեր կըտրեց, մին կըտրական ջօղաք ասի, ես քընամ, ամ-մա էս էլ ըմ աքըմ, ոէր տեարտակ ետ չըմ տառնայու, էլ ըտհէնց մըհանէք մի քըցիլ, լօխ քու ձերքիտ ա, ոէր օգես, կըտաս:

ՆԱՆԸՄ. Ախճի, շատ էլ ես օգեմ, ինձանաւ ան, հեարը կաղ-նած, Ասուած պահի ախպէրը, ախպրակինը, ոէր ընդրա «հան» իմ, եա ընդրա քըշտին «հաչ» ա, «չէն էլ» «չէ», մինչի ընդրանք ըռազի չըկենան, ես նմքեարա ըմ մին պերան ծըպըտամ:

ՄԱՆԱՆ. Աքըմ չըս, թա հարսիտ հան ձէր լօխչու քըշտին հաչ ա, չէն էլ չէ:

ՆԱՆԸՄ. Հա, ըտհէնց ա:

ՄԱՆԱՆ. Դէ լաւ, հարսիտ կըռըցինիլը իմ վըզին:

ՆԱՆԸՄ. Ամմա թա կարաս հա:

ՄԱՆԱՆ. Խէ հինչ ա, դէ ասի փիչը շօռ տըւօղը էլլհա ես ըմ ըլի:

ՆԱՆԸՄ. Ձէ, քու արեւը, էն կեարմիւր Աւետարանը:

ՄԱՆԱՆ. Բա էլ հինչ ան, մին էլ ըմ աքըմ. հարսիտ կըռը-ցընիլը իմ վըզին:

ՆԱՆԸՄ. Ախրը հունց քու վըզիտ, ոէր նա սաղ օրը էլ խօսք չի մընըմ, ոէր ասի ոէչ, էլ ուրթում չի մընըմ, ոէր տա ոէչ, թա հուռումին մինչի տըսնօխտը տա-րին թըմամիլը, պարտական մնաս, հու ոէր օզի, կօզի թաքաւորին տղան էլ ընի, թա տաս:

ՄԱՆԱՆ. Էդ էլ խօսք ա, կասեն. խէ՛ք, պըռաւընեղու ըս, են-նան տաս, հինչ ա. ոէր մունք տասը, տըսնըմին տը-րեկան ընք մարթի քընեցալ, հինչընէրըս ա պըկասալ:

ՆԱՆԸՄ. Ձէ, ասիլ միր, Մանան, ոէր շատ թափաւուդ կա, էն ջուռա պիտմա մարթ տիւրիւր կեա, եննան գեօռ-քաշըղատեղ չըտառնա. մէր ծառերը կըտորեցին:

ՄԱՆԱՆ. Էտ ա ըլի, թազա հաւեր ըն տիւս եկալ, արկաթի ծըւանք ըն ածըմ:

ՆԱՆԸՄ. Եանի ածըմ ըն հէնց, վախիլ միր: Մինչի մըհէկ ես էլ ըմ ըլալ քեզ. նման ասըմ, թա ախճիկը ոէր աչ-քը պացաւ, պիտմա շուտ անես, ճընապարհ տընես լեաւ, թա փիս, հունց ոէր իւրան նասիբն ա. մին հա-փուռ մոխիր ա, աչքերըտ խըփես հափուս քու բախ-տին: Ամմա մըհէկ տեսնըմ ըմ, ոէր շատ թափաւուդ կա:

ՆԱՆԱՆ. Դէ ես ասըմ չըմ, թա հէնց աչկերըտ խափած տօ, ախրը ընդրա տակըն էլ ըս գիղըմ կըլօխն էլ: Մին մադար տղա, հինգ քըւօր ախպէր, փողը փող, առուտուրն առուտուր, տղան էլ տղա, էլ ըտրանից լաւ հինչ պիտմա ընի:

ՆԱՆԸՄ. Լօխ ըտհէնց ա, դըռուտա, ես էլ ըմ գիղըմ, ամ-մա մին պան կա ախրը...

ՄԱՆԱՆ. Հինչ կա, ասի ըլի, սըրտինըտ պացարա: Հա, բալ-քամ օզըմ ըս էս թազա աղաթին ըզեօրա հարսնացը-ւրին մըհար փող քըցեն բանկը: Թա էտ ա, ասի, էլ հինչ ըս քաշըմ:

ՆԱՆԸՄ. Քուռանամ, թա մըտկաւըս էլ ընգած ընի:

ՄԱՆԱՆ. Խէ՛ք, հինչ համթ պան ա, տիւք տըւիք ճէչ: Քանի հըզար մանէթ օզըմ ըք, էս սահաթըս, առաջ բլեթը պերեն, եննան նըշանը:

ՆԱՆԸՄ. Ոէր մունք տըւինք, լեաւ արինք: Հարսըս եկաւ թա չէ, ինձ էլ, պատրօնին էլ կանչեց, կամօղան լօխ տըսնը-հինգ հըզար մանէթի բլեթները հանեց տըւաւ պատրօ-նին, համ էլ ասեց, «իմ հըար, եա իմ մըար շատ իւրանց

մըհար ըն արալ, ոէր փողըն օգալ: Թա ես ձեր տըղին բաբի, էլ փողը հինչ էր, թա բաբ չի, ըսկի փողաւ էլ բաբ չըմտառնալ: Պատրօնը շատ գօռեց, ոէր բլեթները էլլհա եօր օնի տանի իւրան կամօղըմը պահի, ըռազի չըկացաւ, եննան պատրօնը քըցեց խըտետը, պաչպը-չօրեց, ուրխութիւն արաւ, ոէր հարսը ընդհէնց ասիլ-զաղաց ա տիւս եկալ, աչկը կօշտ: Պատրօնն էլ երկալաւ էն տըսըհինգին երրա հինգն էլ աւելցըրաւ, նորաղան հարսին անըմաւը քըցեց բանկը, բլեթներն էլ հենա իմ սանդուղըմըս: Իմ հարսին պանը օրիշ ա. մին հաց պիտմա օտեմ, մինը մատաղ տամ:

ՄԱՆԱՆ. Դէ էլ մին օրիշ մանի չըկա, ոէր տալիս չըս, ըտհէնց սարաւ, քօլաւ չս քըցըմ:

ՆԱՆԸՄ. Ախրը մըհէկի ըստրանա մին կէս սըհաթ առաջ տիւ մին լաւ խօսք ասեցիր:

ՄԱՆԱՆ. Հինչ:

ՆԱՆԸՄ. Ոէր մինչի մըհէկ հունց ընք ըլալ հըզար մօրըքիւ-րից իւրիւր մօտիկ:

ՄԱՆԱՆ. Էն խաչը (երեսին խաչ հանելով), էն մեռունը, ոէր ըտհէնց ա:

ՆԱՆԸՄ. Դէ ոէր ըտհէնց ա, տիւ ընէս սօրա կաղնած անմահ պատարաքը, թա սօտ ասես. էն տըղան հոնց տըղաց ա, դըրխտըն ասի:

ՄԱՆԱՆ. Հոնց թա՝ հոնց տըղաց ա, մին ձերքը ոսկըմ, մին ձէրքը արծաթըմ, ջահիլ տղայ:

ՆԱՆԸՄ. Էտ չըմ ասըմ, էտ. տըղան ասի, տըղան:

ՄԱՆԱՆ. Դէ, ես էլ տըղին մըհարըմ ասըմ ըլի:

ՆԱՆԸՄ. Բա ասըմըն, տըղան համ թիւնդ թօխթ հաղանող ա, համ էլ շատ խըմող, դըրխտըն ասի, դօրթ ա, թա սօտ:

ՄԱՆԱՆ. Էն կանանչ մեռունը, իմ ախպօր արեւը, թա նա խըմող ընի: Ամմա, կարտ հաղանիլը հինչ համօթ պան ա, էտ օրիշ պան էր, ոէր խալխին տըղօրցը նըման շիւրախանըմ, քէրծին կըլխին գատերի նըհետ

ընէր հաղանըմ, ամմա նա սուղիչի, բեաղի, չինովնիկի, ափիցարի, ինսպեկտըրի, սմատրիտելի նըհետ ա նըստըմ եր կէնըմ. դէ քեզանից ըմ հարցընըմ, ամալ կը կեա, ոէր հաղ չանի. փառք Ասծու, հա հաղ անի, հա քեփ անի, կըլխելու չի հու:

ՆԱՆԸՄ. Զէ, քըմատաղ, Մանան, ես հալա վըհատըմ չի, ոէր էտ էլ դօրթ ա, Աստուծ շընհաւէր անի, հուժ ոէր օղըմ ըն օղեն:

ՄԱՆԱՆ. Խէ, Նանըմ-բաջ, խէ ըս ըտհէնց ասըմ. քեզ մըհար հալա պիտմա պարծանք ընի, ոէր քու փէսատ ըտհէնց մարտկանց նըհետ ա նըստըմ եր կէնըմ. ես էտ ասեցի, ոէր հալա շուտ անես, մին լեաւ ջօղաք ա-սես. թա խօսքըս կօտրես...:

ՆԱՆԸՄ. Զէ, ոէր տեղաւըմին էլ ծիւծիլ ոէսկի տառնա, ես էլ թամահ չօնեմ. համ էլ էն կըլխան ես ասեցի, ոէր մեր ախճիկը հալա ըրախաց ա, կօզի բոջը ընդհէնց ծիլ ա տըլալ:

ՄԱՆԱՆ. Էն կապիւտը, (ցոյց է տալիս դէպի երկինքը) էն կեարմիւր Աւետարանը, ոէր հըզար տեղան հէն ըն ընգրանց եննան կըտրած: Զաքոյենց Թիւռուն ախճիկը, Մախուխենց Աւետիսին թոռնը, Թուժունց հուսուն քըւօրն ախճիկը հըզար դօնըմ նըշանց ըն տըլալ, ամմա դէ ոէշ մինին էլ հաւան չըն կացալ, աչկըները ձեզ երրաց ա:

ՆԱՆԸՄ. Դէ մին էլ Աստուծ շընհաւոէր անի. հէտ ա մինը մինիցը լաւ ախճըկերք ըն, մինին հաւան կէնան, օղեն:

ՄԱՆԱՆ. Դէ լաւ, էլ քեզանից քըցիլ մի:

ՆԱՆԸՄ. Զէ, չէ, քու արեւը, ոէր քըշըռաւանըմին ոէսկի, բուխեանդ, մարջան, մարքարիտ էլ տառնա, թամահ չօնեմ:

ՄԱՆԱՆ. (վեր կենալով) Դէ տիւք ըք դիղըմ, ախճիկը ձերն ա, ամմա, ոէր իմ մըսըհաթըս լսէք, խօսքըս տափը չըք քցիլ: Հինչ անեսք թա տըղան մին պատառ գատ ա,

Թաք տօնն ընի լեաւ, ապրիլն ընի լեաւ (բարեւելով: Դէ պարի քըշեր, ես շատ ետ ընգի, քընամ, տիւք էլ մին իրեք չօրս հինգ օր մէտք արէք, եննան մին կրտրական ջօղաք ասեցէք:

ՆԱՆԸՄ. (նոյնպէս վեր կենալով) Կաց, պատառ նըստի, ասեմ փանարը վառի, եննան տիւք եկ, ցօրտ ա, տըռանը մաթալ կաղնեա ոէչ (դուրս է գնում):

ՄԱՆԱՆ. (միայնակ) Մինը ասօղ չընի, թա տըղին նըհետ հինչ օնես. տարուն մին էրկու ամիսը եա ըստեղ ա ընելու՝ եա չէ, մընացած վախտն օրիշ շըհարներըմ: Մին մըթանից, մին էլ մի դաստ ոէսկի գիւլուկներիցըս ընգի: Ասալ ըն, ոէր էտ պանը կըլօս պերես, մին դաստ ոէսկի գիւլուկ, մին էլ մին լաւ, քու հաւան կացած, մըթանա՝ քու խալաթն ա:

ՆԱՆԸՄ (մտնելով). Եանի, Մանան, հօր ըս քընըմ, հըգարանց մին եկալ ըս, կաց, հաց կօտենք, եննան կըքընաս:

ՄԱՆԱՆ. Ձէ, շընուրհակալ ըմ, գէ ոէր օգիր իմ կենալըս, հենա իմ խաթըրն էլ կօտրիլ չիր ըլի: Պարի քըշեր: (ծնոք են տալիս միմեանց):

ՆԱՆԸՄ. Լիւսը պարի. ամմա լեաւ չարիր, կացած պըտիր. պարիկենթան օրեր ա, մին տեղ հաց կօտինք, էլլհա կըքընիր:

ՄԱՆԱՆ. Ձէ, հաւատա, կարալ չըմ, շընուրհակալ ըմ. լեաւ չաչ խըմեցի, եմիշ կերի (դուրս գալով):

ՆԱՆԸՄ. Լօխ սօտ, եմիշ օտիլըտ դօրթ. ասի մին սուրփ Աստուած էլա արալ ըս, ձերքըտ մին գատի էլա նիչ ըս տըւալ (դուրս են գնում):

Բ. ՊԱՏԿԵՐ

Դըւած են դաշնամուր, գըքեր, էտաթերկաչ, սեղաններ, սամօ-վար չաչի սարքով, եաչն:

(Մարտիրոսը մտնելով ծնուն լրագրեր եւ նամակներ)

ՄԱՐՏԻՐՈՍ. Աչ ախպէր, ըստհէնց պան ըք տեսալ, ըստհէնց պան ըք լսալ. խալխին կընանիքը շօրի, օտիլ-խըմելի մըհար ըն կըռւ տամ, իմն էլ՝ կիրի, կաղեթի, ազգի մըհար: Դէ քընա ուսոււմ առած ախճիկ օգի. էտ հալա խըրեկա, տամ էլ չին, նաղ ին անըմ, թա պըտի մեր ախճրկան անըմաւը մին տըսնըհինգ հըգար մանէթ քըցէք բանկը, եննան տանք: Բաղդասարենց Մարկօսին նըման մարթին ախճիկը քընա Պըլտօնանց Կիրիքօրին, էն էլ հըգար մին մըննաթաւ, տասնըհինգ հըգար մանէթ էլ ինք առնի իւստալիգ, եննան փըսակի, ինձ նըմանը՝ տըսնըհինգ հըգար մանէթ տաչ՝ եննան: Եանի սօտ ըն ասալ աթալարը՝ թա «քու ճպատըտ քու քոլատ կըտրի»։ Եանի սօտ ըն ասալ, թա «կընդանն աչք պըտի տաս, լիւս չըտաս»։ Ձեզանից ըմ հարցընըմ, ա լսալը, ոէր շան ոէրթի կընդան խեւքաւը կընգնի, տարին հիցուն-վացցուն մանէթ նըհախ տեղան զիրթ զիբիլի տա (ցոյց տալով լրագրները եւ ծղելով սեղանի վրայ): Էս հինչ ա՝ Մշակ, էս հինչ ա՝ Փորձ, էն հինչ ա՝ Իլիւստրացիա, Նիվա...

ՄԱՌԱՅ (մտնում է մի նամակ ծնուն). Ձեր հարսը տանն ա:

ՄԱՐՏԻՐՈՍ. Հա, հինչ ըս անըմ, իւէր ընի:

ՄԱՌԱՅ. Մէր ազան էս կիրը տըւալ ա, ոէր տամ իւրան (տալիս է նամակը):

ՄԱՐՏԻՐՈՍ (առնելով նամակը)։ Հո՛ւ ա ձեր աղան։ Հինչ կիր
ա։ Ձեր աղան հինչ կիր պիտմա կիրի կրնգանքս երրան։
ԾԱՌԱՅ, Գիղըմ չըմ։ վրհատա թխաթըրի մըհար ա։ օղըմ
ըն թխաթըր անեն, հինչ անեն։ էտ ա կիրքմը կըրած
կընի։

ՄԱՐՏԻՐՈՍ։ Աօըմ ըս աղատ հու ա։

ԾԱՌԱՅ։ Խէ, ճընանչըմ չը՛ս, Վարթանեսնց Արամը։

ՄԱՐՏԻՐՈՍ։ Համ... (ծոր տալով) Ահա ա, տիւ քընա, ես
կիրը կըտամ կրնգաս, ջօղաբը մէր տըղին անաւ կը
ղըրկենք (ծառան դուրս է գնում)։

ՄԱՐՏԻՐՈՍ։ Ա՛յ ախպէր, ըստհէնց պան ըք լըսմի, ըստ-
հէնց պան ըք տեսմի։ ձէր մարթ ըռազի կըկէնա, ոէր
մին եադ ջահիլ տըղա, մին եադ ջահիլ հարսի երրա
կիր կըրի (քիչ մտածելու)։ Մին պանալու ըմ տեսնամ
հինչ ա կիրըմ, հինչ ա օղըմ իմ կրնգանիցը (կարդում է
ծրարի երեսը)։ Մեծարելի տիկին Մարիամ Մկրտչեան
Աոստանդեանց։ (բանալով ծրարը կարդում է)

Ագնըուհի Տիկին!

Վատահ լինելով Ձեր ինքնամանաթեան վրայ, թող
եմ տալիս ինձ, դիմել Ձեզ մի խնդրով եւ լիայոյս եմ, որ
չըպիտի մերժէք, այլ ուրախութեամբ յանձն կառնէք։ Մենք
կամենում ենք յօգուտ Վանայ սովալուկներին, որոց թշուա
եւ աղէտալի վիճակը անշուշտ ցրադրութիւնից Ձեզ յայտնի
կըլինի, մի ներկայացումը տալ։ Հրաւիրելով եւ Ձեզ, Մե-
ծարեւի տիկին, օգնել այս բարենպաստիկ գործին, նոյնպէս
մասնակցել, խնդրում ենք, վաղը կէսօրից յետ բարեհաճիք
շնորհ բերելու մեծապատիւ տիկին Արատարինէ Պետրո-
սեանի մօտ, ուր ներկայ կըլինին եւ միւս մասնակցողները,
որպէս զի ընտրենք պիտան եւ խորհրդակցենք բեմը սլա-
րատելու համար։ Մասնակցողներն են՝ տ. Շուշանիկ Սար-
գսեան, օր. օր. Աննա եւ Վայիանէ Միւրաբեանց, պ. պ.
Ա. Ալէքսանեանց, Մ. Աւետիքեան, Պետրոսեանց, ես եւ
մի քանի հոգի Ձեր նախկին ուսուցիչներից։

Քաջայոյս լինելով, որ ուրախութեամբ կընդունէք մեր
առաջարկութիւնը, խնդրենք ընդունել մեր յարգանաց հա-
ւատարմը։ Ի դիմաց թատերասէրների Ձեր պատրաստական՝

ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՏԱՆԵՆԵՐՆԵՐ

1880 թ. 3 մարտի.

Շ ու շ ի.

ՄԱՐՏԻՐՈՍ։ Դէ խօսեցէք... դէ-դէ-դէ, էլ հինչ ասեմ։ Էն
հինչ չար սըհաթ էր, ոէր ես էտ անըզգամին ոստ
եկի...

ՄԱՐԻԱՄ (մտնելով)։ Մարտիրոս, Մարտիրոս, էդ ինչ էիր
կարդում։

ՄԱՐՏԻՐՈՍ։ Չօը պինչըտ էի կարթըմ։

ՄԱՐԻԱՄ։ Ի՛նչ կաչ, խէր ընի։

ՄԱՐՏԻՐՈՍ։ Համեցէք, տես (տալիս է նամակը)։ Հըգար դօն ըմ
տալ ըմ, թա ձեռք երկալ ըտհէնց պանը կըտրած-
ներկցը, մուռաց ըտհէնց լիմարութիւնները, օշըտ կը-
լօխտու վըհաբի, քու թաչի թուշիտ մրտէկ արա.
հինչ թխաթըր, հինչ կաղէթ, հինչ տէս, հինչ տէն։

ՄԱՐԻԱՄ (նամակը ցածր ձայնով կարդալու)։ Դէ լաւ, էլ ինչի
ես բարկանում։ Հես կամենում, չեմ մասնակցիլ։ Բաչց
միտըդ բեր խոստումներըդ։ Ես չեմ ցաւում, որ պիտի
մասնակցեմ կամ ոչ, բաչց քո աչգալիսի արարքներն
են ինձ նեղացնում եւ վշտացնում։

ՄԱՐՏԻՐՈՍ (աւելի բարկացած)։ Քեզ ըմ ասըմ, սասըտ կըտ-
րի, դէ սո՛ւս, էլ ճուպուտըտ հոնես ոէչ։

ՄԱՐԻԱՄ։ Ձեմ հանիլ, կըլլեմ։

ՄԱՐՏԻՐՈՍ։ Ե ջահմաթ, ոէր ըստրա ոէլս մըրըխը փըշ-
րեմ, հօքին հանեմ, կասէք՝ Մարդին պըլացալ ա, կա
սէք՝ Մարդին գըթալ ա։

ՄԱՐԻԱՄ։ Ես արդէն քեզ ասացի, եթէ չես ցանկանում,
չեմ մասնակցիլ։

ՄԱՐՏԻՐՈՍ։ Հէս ա ասըմ ըմ, ոէննրտ ոէննի առաջի ըս-
րալ, կըտեսնաս կըլօխտ հինչ կըպերեմ։



ՄԱՐԻԱՄ. Կամենում ես, հէնց էս րօպէին կրպտախանեմ, որ չեմ կարող մասնակցել (կամենում է վեր առնել զրիչ և թուղթ):

ՄԱՐՏԻՐՈՍ. Էտ հինչ ըս անրմ:

ՄԱՐԻԱՄ. Կամենում եմ պատասխանել, որ չեմ կարող մասնակցել:

ՄԱՐՏԻՐՈՍ. Հա, կամենում ես պատասխանել (Մարիամը ապշած նայում է, իսկ ինքը քիչ լուռ թիւնից յետոյ): Էտ դալամը, թոխթը եր տիր: Թա մին էլ մարթ կըկեա եննատ, Կեայուտին ասի, ոէր ասի, թա՛ հարսը տանը չի, համ էլ ասալ ա, թա էլ չի կեան իմ եննան, ըտհէնց չիմար, տարտակ պաներում ինքը պան չօնի:

ՄԱՐԻԱՄ. Ախ, խնդրեմ ներես. մասնակցիլ՝ չեմ մասնակցիլ, երբ չես ցանկանում, թէ ե գրանում էլ բացի օգտից ոչինչ վնաս և պակասութիւն չըկայ: Բայց մարդկանց անպատեղ, նոյնպէս և ինձ, այլ չեմ անիլ:

ՄԱՐՏԻՐՈՍ. Տիւ անիլ չըս, ես կանեմ. ես ինքքս թափշուր կանեմ. չէ՞ թօղելու ըմ քու գեօնգիւնա:

ՄԱՐԻԱՄ. Իրաւունք չունիս և չես էլ կարող անել. քո ստրուկը չեմ, այլ քո կինը:

ՄԱՐՏԻՐՈՍ. Հա, հա, հա, չօնեմ: Էտ հըշտեղ ա կըրած, քու կազեթներըմըտ, հա: Լեաւ, տեսնանք:

ՄԱՐԻԱՄ. Քրիստոսի սուրբ Աւետարանումը. քրիստոնէութիւնը ինքն է հրամայում և հաւատացիր, որ կըգաց ժամանակ և դու կըտեսնես, թէ ով է մեզանից սրխալաւծ եղել:

ՄԱՐՏԻՐՈՍ. Ես քու ասածներան չըմ, թըքածը լիւզողներան. իմ «հաս» հա ա, «չէս» էլ չէ: Մարթը մարթ կընի, կընէկն էլ կընէկ. Կընէկը հինչ ա, մարթին աղաքին ճրպրտալը հինչ:

ՄԱՐԻԱՄ. Թող քո ասածը լինի. ժամանակը ինքը կուղղէ իմ կամ քո սխալը. ամենայն ինչ սպասում է նը-

րան, բայց նա ոչ ոքի չի սպասում: Բնութեան օրէնքների բժշկը միայն ժամանակն է, նա միայն կարող է բնութեան ամենայն ախտը, ցաւը, կեղտը, վայրենութիւնը, բարբարոսութիւնը, տղիտութիւնը, խաւարը, նեղութիւնը մի խօսքով ամենայն բան նա կարող է միայն բժշկել:

ՄԱՐՏԻՐՈՍ. Էլլհա սկըսեցիր փիլիսօփութիւնը՞տ:

ՄԱՐԻԱՄ. Սա փիլիսփայութիւն չէ, բայց թողնենք այս խօսակցութիւնը. պալատիցն ինչ լուր ունիս, ինչպէս վճռեց գործը, տեղեկութիւն ունիս, թէ դեռ ոչ: Կարծեմ, երէկ պէտք է լինէր քննութիւնը:

ՄԱՐՏԻՐՈՍ. Էլլհա իմ պաներըմըս խառնըւեցիր: Հըգար դօնըմքեզ ասալ ըմ, ոէր էտ քու պանը չի, քու պանըտ խօսի:

ՄԱՐԻԱՄ. Ուրեմն դրանում էլ իրաւունք չունիմ: Թող դա էլ քո ասածը լինի:

ՄԱՐՏԻՐՈՍ. Ես քու խելքի մարթկանցիցը չըմ, ոէր տասը մանէթի տեղ հարիւրը խարջեմ: Խէ, ոէր տասը մանէթաւ, մին փունջաւ, մին կըլօլ շաքարաւ պանը ամալ ա կեալիս, հէնց հարիւրներ, հըգարներ պիտմա խարջեմ:

ԳԱԼՈՒՍՏ (մոտում է). Աղա, տեղեգրափչին կանչըմ ա:

ՄԱՐՏԻՐՈՍ. Հօր ա, հօր, ասի ըստեղ կեա. շուտ արա կանչի:

ԳԱԼՈՒՍՏ (դուրս գալով). Էս սըհաթիս:

ՄԱՐՏԻՐՈՍ (ծառայի հետեւից կանչելով). Հանփարցում, հանփարցում, եկ, եկ տեսնանք, հինչ խաբար ըս պերըմ, թա խէր ընի, պանըտ պան ա:

ՀԱՄԲԱՉՈՒՄ (մոտելով). Հոնց թա պանըտ պանա. տիրե պիտմա տաս, տիրե (տալիս է հեռագիրը):

ՄԱՐՏԻՐՈՍ. Աբասաւ էլ ըռազի չըս ըլլ (առնում է հեռագիրը):

ՄԱՐԻԱՄ. Լաւ, լաւ, վիճաբանելու ժամանակ չէ. բաց հեռագիրը, տեսնենք ինչպէս է վերջացել գործը:

ՄԱՐՏԻՐՈՍ. Էլի՜նա պանըմբս խօսեց. ոէր խէր էլ ընի, կը-
շառանա, էն խաչը, կըշառանա:

ՄԱՐԻԱՄ. Մեղա՛յ քեզ, Աստուած:

ՄԱՐՏԻՐՈՍ (բանալով հեռագիրը). Տիւ քընա մին ստաքան
արաղ պեր Հանփարցումին տօ հալա, եննան էլի՜նա
փիլիսօփութիւնըտ կըպընըընես (Մարիամը դուրս է
գնում):

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ. Պարուն Մարդի, խէ՛ ըս ջահիլիտ նըհետ
ըտհէնց եօլա քընըմ, խելսձ չի: Ախէր, ոէր տիւ տը-
րան տեսնիր իւրան հօրը տանը հունց ին պահըմ,
պաշտըմ ին, պաշտըմ: Մին Մարեան խանըմ էր, մին
սաղ Ղալա:

ՄԱՐՏԻՐՈՍ. Էտ ա ըտհէնց ըն անըմ, ըտհէնց ըն պահըմ
է, ոէր մարթի քընեցած վախտն էլ դառըբալա ըն
տառնըմ իւրանց մարթկանցը մըհար:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ (մի կողմը). Աստուած ըշտահը հուժա տըւալ,
փըլաւը հուժ: Էլ մարթ չըմընաց, ոէր էտ ախճըկան
օղի ոէչ. հարուստ, սովդաքար, չինօվնիկ, ափիցեր,
սուղեա: Նասիբն էր ըլի, տարաւ. խելսձ ջահիլ:

ՄԱՐՏԻՐՈՍ (նոյն ժամանակ կզկզալով կարդում է հեռագիրը).
ԱՖ-ԱՖ ԱՖՆՈՎ va-me, ԱՖՆՈՎ vame pro-pro-u pro-u-
pro-u., էս շան ոէրթիքը էս հունց ըն կըրալ է,
կարթըմ էլ չի (նորից սկսում է կարդալ): ԱՖ-ՆՈՎ, ԱՖՆՈՎ
vame, pro-u. (Գալուստը բերում է մի շիշ արաղ մի
բուկի հետ ածում է տալիս Համբարձումին):

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ (առնելով քաժակը). Սաղ ընէք օրախ, միշտ
ուրխութիւնաւ մըննեմ էս տըռնաւը. պարուն Մար-
դի, ձեր հրամանօց պաշտօնութիւնը, Մարեան-խա-
նըմիս կենացը (խմում է, Գալուստը վեր է առնում քա-
ժակն ու շիշը եւ դուրս գնում):

ՄԱՐՏԻՐՈՍ. Կարթըմ էլ չի էս անդէրը:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ. Պարուն Մարդի, խէ՛ չըս Մարեան-խանը-
միս կանչըմ կեա կարթի, մին մընութումը ճիւր կանի:

ՄԱՐՏԻՐՈՍ. Հը... Ղօրթ ըս ասըմ է...

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ. Դէ էս թահթի ըմ, կլիթանցուն Տեռ-
քաշի, հինչ էլ շափաղաթ ըս անելու, արա, էս քը-
նամ, եննան տիւք կըկարթէք, օրիշ հարկաւոր տէ-
